

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/2

1 հուլիսի 2016թ.

Քննարկվեց «Պրոքսի Սենտր» ՍՊԸ 03.06.2016թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 06.05.2016թ-ի թիվ 5011273/1 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 27.01.2016թ-ի թիվ 5011273/1 հանձնարարագրի համաձայն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 06.05.2016թ-ի թիվ 5011273/1 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2.484.776 դրամ, ինչպես նաև 168.610 դրամ հարկի պակասեցվող գումար:

Սույն գործի կապակցությամբ նշվեց նաև, որ պաշտոնական փաստաթղթեր կեղծելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում 07.05.2016թ-ին հարուցվել է թիվ 83101216 քրեական գործը, որի նախաքննությունը շարունակվում է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83101216 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Պրոքսի Սենտր» ՍՊԸ 03.06.2016թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ